ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Գորիս 28 հուլիս 2022թ

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են Գորիս համայնքի ավագանու 21 անդամից 11-ը՝ Ս.Մկրտչյանը, Ա. Աղաջանյանը, Հ.Դիլանչյանը, Ա.Տոռոզյանը, Գ.Հակոբյանը, Ա.Սոնյանը, Լ. Բաղդասարյանը, Վ. Աբունցը, Դ.Մաշուրյանը, Ա.Գալստյանը, Հ.Իվանյանը ՝

Նիստը վարում է Գորիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտյոմ Աղաջանյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ղուկասյանը:

Ա. Առուշանյանը ավագանուն ներկայացրեց արտահերթ նիստի օրակարգը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ __11____, դեմ ___0__, ձեռնպահ՝ __0__ ավագանին որոշեց՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու կանոնակարգը

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 28-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի 1-ին հարց՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Գարեգին Փարսյան

Հարցի քննարկումից և մտքերի փոխանակումից՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ __11____, դեմ՝ __0__, ձեռնպահ՝ _0___ ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 7-ի «Գորիս համայնքի վարչական սահմաններում, Ներքին Խնձորեսկ գյուղում գտնվող, քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասը, Գորիս համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի հետ փոխանակելու և փոխանակված հողատարածքը «Հայաստան» համահայկական հիմնադրամին անհատույց օգտագործման տրամադրելու մասին» թիվ 79-Ա որոշման 2-րդ կետը շարադրվել նոր խմբագրությամբ՝

<<2.Գորիս համայնքի վարչական սահմաններում, Ներքին Խնձորեսկ գյուղում գտնվող, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Անդրանիկ, Ալիսա, Սվետլանա և Ստելլա Շահնուբարյաններին պատկանող 0,119 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-063-0016-0004) փոխանակել Գորիս համայնքի սեփականությունը հանդիսացող, Ներքին Խնձորեսկ գյուղի 2-րդ փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 12 հասցեի 0,12000հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 09-063-0003-0024) հետ:>>:

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
2. ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
5. ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
6. ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
8. ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
9. ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
10. ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
11. ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ք. Գորիս
28 հուլիս 2022թ